ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀԵՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

«Ձեռնարկատիրական գործունեություն» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Ձեռնարկատիրական գործունեություն» մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից աշխատանքային շուկայում նոր հմտություններով և կարողություններով այնպիսի մասնագետերի պատրաստմանը, որոնք կունենան տնտեսության տարբեր ոլորտներում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, գործող ձեռնարկությունը կառավարելու, ձեռնարկության հարկային, մաքսային հարաբերությունները կազմակերպելու, արտադրությունը, մարքեթինգն ու վաճառքը, ֆինանսները, ինչպես նաև արտադրանքի արտահանումն ու ներմուծումը կազմակերպելու հմտություններ:

Մագիստրոսական կրթական ծրագրի իրականացման արդյունքում մագիստրոսը տիրապետում է ինչպես բիզնես, այնպես էլ՝ պետական համապատասխան ոլորտներում կառավարչի նկատմամբ առկա պահանջներին: Շրջանավարտներին շնորհվում է «Կառավարման մագիստրոս» որակավորում:

Մագիստրոսական ծրագիրը մշակվել է ինչպես ոլորտի, այնպես էլ՝ գիտական շրջանակների լավագույն մասնագետների կողմից:

Ծրագրի տևողությունը 2 տարի է, դասերը կանցկացվեն շաբաթական երեք անգամ:

Ուսման վճարը մեկ տարվա համար 520.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը՝ 1 մլն. 40 հազ. ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիր

Մագիստրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են տնտեսության տարբեր ոլորտներում բիզնեսի կազմակերպման և կառավարման ժամանակակից գործիքներին, բիզնեսի վարման առանձնահատկություններին, սպառողների և մատակարարների հետ իրավապայմանագրային հարաբերությունների, հարկային և մաքսային հարաբերությունների, արտահանման և ներմուծման կազմակերպման արդի պահանջներին և այլն:

Ծրագրի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվելու են ինչպես օրենսդրության, այնպես էլ՝ վարչարարության հարցերը մեր հանրապետությունում: Դասախոսելու են պետական կառավարման համակարգի բարձրագույն պաշտոնյաներ, արդյունաբերության, առևտրի և ծառայությունների, շինարարության, տրանսպորտի և այլ ոլորտների ընկերությունների տնօրեններ, փորձառու մասնագետներ:

Աշխատանքի հնարավորություններ
Կրթական ծրագիրը պատրաստվել է՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը, ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան, և նպատակաուղղված է մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը հայկական տնտեսության մեջ ամեն տարի աճում է: Տվյալ ծրագրի շրջանակում արդյունաբերության, առևտրի և ծառայությունների, շինարարության, տրանսպորտի ոլորտի առաջատար կազմակերպությունների հետ նախատեսվում է սերտ համագործակցություն՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների հարցում: Շրջանավարտները ուսումնառությունից հետո կարող են աշխատել ժամանակակից տնտեսության տարբեր ոլորտներում, քանի որ տիրապետելու են բիզնեսի կազմակերպման և կառավարման ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններին: Կրթական ծրագիրը ղեկավարելու է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Միքայել Մելքումյանը: